Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 2

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ, ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՄԲ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-ԻՆ ԺԱՄԸ 16:00 -ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

քաղ. Երևան
Մասնակցում էին՝

Խորհրդի անդամներ

Հ. Աբրահամյան	Հայաստանի Հանրապետության վարչապետ
Դ. Հարությունյան	Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար
Գ. Խաչատրյան	Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար
Ա. Հովհաննիսյան	Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար
Ս. Սահակյան	Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի նախագահ
Վ. Մանուկյան	Հանրային խորհրդի նախագահ
Մ.Մելքումյան	«Բարգավաճ Հայաստան» խմբակցության ներկայացուցիչ
Է. Երիցյան	Հայաստանի համայնքների միության նախագահ

Հրավիրվածներ

Ա. Աշոտյան	Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարար
Ա. Սարգսյան	Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի տեղակալ
Ս. Քրմոյան	ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Ա. Նազարյան	ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ
Ա. Բադալյան	ՀՀ քաղաքաշինության նախարարի տեղակալ
Ա. Քարամյան	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ
Գ.Թադևոսյան	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի տեղակալ
Խ. Հակոբյան	ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ
Կ. Հարությունյան	ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ
Շ. Հարությունյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ
Վ.Պողոսյան	ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ
Տ. Բարսեղյան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Ս.Կարայան	ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարի տեղակալ
Ս. Ավետիսյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

Վ. Եղիազարյան	ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանության պետի տեղակալ
Ա. Հարությունյան	ՀՀ ԱԱԾ տնօրենի տեղակալ
Խ. Կարայան	ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի տեղակալ
Վ. Ներսիսյան	ՀՀ ԿԱ Միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի նախագահի տեղակալ
Վ. Գասպարյան	ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության պետի տեղակալ
Ա. Կիրակոսյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի ղեկավար
Հ. Հակոբյան	ՀՀ ՏԿԱԻՆ աշխատակազմի ղեկավար
Շ. Ավագյան	ՀՀ արտաքին գործերի նախարարության աշխատակազմի ղեկավար
Ս.Մուրադյան	ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի ղեկավար
Կ.Ղահրամանյան	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավար
Ֆ. Զաքարյան	ՀՀ սփյուռքի նախարարության աշխատակազմի ղեկավար
Ս. Հակոբյան	ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության աշխատակազմի ղեկավար
Կ. Ասատրյան	Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի հակակոռուպցիոն ծրագրերի մոնիթորինգի բաժնի պետ
Մ. Թովմասյան	Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի հակակոռուպցիոն ծրագրերի մոնիթորինգի բաժնի փորձագետ

Մ.Գյուլումյան	Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի հակակոռուպցիոն ծրագրերի մոնիթորինգի բաժնի փորձագետ
Գ. Սարգսյան	Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի հակակոռուպցիոն ծրագրերի մոնիթորինգի բաժնի փորձագետ
Մ. Գալստյան	Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալի օգնական
Լ. Էսաձե	Եվրոպական Միության փորձագիտական խմբի ղեկավար
Ա. Մովսիսյան	Հայաստանի Հանրապետությունում ԱՄՆ ՄԶԳ-ում ծրագրի ղեկավար
Լ. Դոյդոյան	Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հիմնադիր-նախագահ
Վ. Հոկտանյան	«Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի գործադիր տնօրեն
Խ. Հարությունյան	Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի փորձագետ
Ա. Խաչատրյան	«Եվրասիա համագործակցություն» հիմնադրամում ծրագրի ղեկավար
Թ. Աբրահամյան	«Արազա» բարեգործական ՀԿ նախագահ

1. Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի առաջին նիստի ընթացքում հնչեցված հանձնարարականների կատարման արդյունքների ամփոփում**:**

(Դավիթ Հարությունյան, Հովիկ Աբրահամյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

ընդունել ի գիտություն արդյունքների ամփոփումը և նկատի ունենալով, որ ՀՀ կառավարությունն արդեն տվել է իր հավանությունը համաձայնագրին, հանձնարարել ՀՀ կառավարության աշխատակազմին՝ շարունակել արդյունավետ համագործակցությունը ԱՄՆ ՄԶԳ-ի հետ և համաձայնագիրն ստորագրել 2016 թվականի հունվար ամսին՝ սկսելով փորձագիտական հանձնախմբի ձևավորման գործընթացը:

2. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների լրամշակված նախագծերի ներկայացում:

(Արփինե Հովհաննիսյան, Հովիկ Աբրահամյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հավանություն տալ նախագծերի փաթեթին.

2) հանձնարարել ՀՀ արդարադատության նախարարին՝ վերջնական տեսքի բերել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների լրամշակված նախագծերը, սահմանված կարգով շրջանառել դրանք և ներկայացնել ՀՀ կառավարության աշխատակազմ:

3. Կրթության ոլորտում իրականացվող «Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բարեվարքության ամրապնդում և կոռուպցիայի դեմ պայքար» ծրագրի ներկայացում:

(Արմեն Աշոտյան, Հովիկ Աբրահամյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հավանություն տալ ներկայացված զեկույցին՝ կարևորելով կրթության ոլորտում կոռուպցիոն ռիսկերի նվազեցման հարցը.

2) հանձնարարել ՀՀ կրթության և գիտության նախարարությանը՝ երկամսյա ժամկետում ավարտել ռիսկերի գնահատումը, քննարկել շահագրգիռ մարմինների հետ, որից հետո ՀՀ կառավարություն ներկայացնել ՀՀ կրթության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի ծրագիրը՝ համապատասխան միջոցառումներով:

4. Կոռուպցիայի դեմ պայքարում հասարակական կազմակերպությունների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության ներկայացում:

(Արփինե Հովհաննիսյան, Հովիկ Աբրահամյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) ընդունել ի գիտություն ՀՀ արդարադատության նախարար Արփինե Հովհաննիսյանի զեկույցն այն մասին, որ կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակներում արդյունավետ համագործակցություն է ընթանում տարբեր հասարակական կազմակերպությունների և միջազգային կազմակերպությունների հետ.

2) հանձնարարել ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարին ու ՀՀ արդարադատության նախարարին՝ շարունակել համագործակցությունը հասարակական և միջազգային կազմակերպությունների հետ.

3) առաջարկել միջազգային և հասարակական կազմակերպություններին՝ կոռուպցիայի դեմ պայքարն առավել արդյունավետ իրականացնելու և նույն ծրագրի կրկնակի ֆինանսավորումը բացառելու նպատակով բոլոր հակակոռուպցիոն ծրագրերի, իսկ դրանց ավարտից հետո նաև արձանագրված արդյունքների մասին տեղեկացնել ՀՀ կառավարության աշխատակազմին: Այդ ծրագրերի իրականացումից առաջ դրանք քննարկել ՀՀ արդարադատության նախարարության և մյուս շահագրգիռ գերատեսչությունների հետ, իսկ արդյունքների մասին տեղեկացնել ՀՀ արդարադատության նախարարությանը:

5. 2015 թվականի ընթացքում կոռուպցիայի դեմ պայքարում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման արդյունքների ամփոփում:

(Սուրեն Քրմոյան, Հովիկ Աբրահամյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) ընդունել ի գիտություն ներկայացված զեկույցը, ևս մեկ անգամ ընդգծել, որ Հայաստանի համար չափազանց կարևոր է կոռուպցիայի դեմ պայքարում միջազգային պարտավորությունների կատարումը.

2) հանձնարարել բոլոր ՀԳՄ-ների ղեկավարներին՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ այս ոլորտում ՀՀ միջազգային պարտավորություններն անշեղորեն կատարելու ուղղությամբ:

6. «Մասնավոր հատվածը և կոռուպցիայի դեմ պայքարը» խորագրով զեկույցի ներկայացում:

(Խաչիկ Հարությունյան, Հովիկ Աբրահամյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) ընդունել ի գիտություն ներկայացված զեկույցը.

2) հանձնարարել ՀՀ Էկոնոմիկայի, ՀՀ ֆինանսների և ՀՀ արդարադատության նախարարություններին, ՀՀ կառավարության աշխատակազմի «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակին՝ շարունակել ներկայացնել առաջարկություններ վարչարարության պարզեցման ուղղությամբ.

3) կարևորել հնարավորինս սեղմ ժամկետում պետական եկամուտների հավաքագրման ոլորտում ռիսկերի գնահատման իրականացումը և այդ գնահատման արդյունքում անհրաժեշտ միջոցառումների իրականացումը:

7. Մարզային և համայնքային մակարդակներում արդյունավետ, թափանցիկ և մասնակցային կառավարման համակարգի վերաբերյալ զեկույցի ներկայացում:

(Վաչե Տերտերյան, Հովիկ Աբրահամյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) ընդունել ի գիտություն ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի առաջին տեղակալ Վաչե Տերտերյանի զեկույցը, որը վերաբերում է արդյունավետ, թափանցիկ և մասնակցային կառավարման համակարգի ձևավորմանը մարզային և համայնքային մակարդակներում: Կարևորել էլեկտրոնային ժողովրդավարության գործիքների ներդնումը, ինչպես նաև քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ակտիվ համագործակցությունը: Առաջարկել հասարակական կազմակերպություններին ակտիվ համագործակցություն ցուցաբերել կոռուպցիայի դեմ պայքարում մարզային և համայնքային մակարդակներում.

2) հանձնարարել ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությանը՝ ուսումնասիրել միջազգային փորձը և հնարավորության դեպքում ընդլայնել նման գործիքների կազմը՝ ավելացնելով համայնքների թիվը, որտեղ կիրառվում են այդ գործիքները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ, ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
հակակոռուպցիոն ծրագրերի
մոնիթորինգի բաժնի պետ, խորհրդի
քարտուղարության պատասխանատու Կամո Ասատրյան